

016  
L-30

1045

~~W = \$2 \*~~

2010

20011

ՀԱՐԻԿ

ԱՄԵՆԱԼԱՒ ԳՐԱԲԵՐ

Յողուած ԶՈՆ ԼԵԲԲՈՒԻ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ

Գլուխորապէս

Բանաստեղծական ստեղծագործութեան

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՆԻՒԹ

—♦♦♦—

Թարգմանեց ռուսեբէնից

ԱՐՅԱՆ ԵԳԻԳՅԱՐԵԱՆ

—♦♦♦—

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի, Վեհամբնովսկի փող. № 7.

1895

016  
L-30

# ՀԱՐԻԿԻ

## ԱՄԵՆԱԼԱՒ ԳՐՔԵՐ

Յօդուած ԶՈՆ ԼԵԲԲՈՎԻ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ

1008  
36/60)

ՕՇ

Գլխաւորապէս

Բանաստեղծական ստեղծագործութեան

ԿՈՒՂՏՈՒՐԱԿԱՆ ՆԻՒԹ

—♦♦♦—

Թարգմանեց ռուսերէնից

ԱՐՅԵ ԵԳԻԳԱՐԵԱՆ



Թ. Ի Ֆ. Լ. Ի Ս  
Տպարան Ա. Վարդանեանցի, Վայովամինովսկի փող. № 7.  
1895

31056-41

Дозволено Цензурою, Тифлисъ, 18-го Августа 1895 года.

Յօդուած ԶՈՒ ԼԵԲԵՈԿԻ

## Հարիւր ամենալաւ գրքեր

I

Ժմռակնեակի շուրջը իմ գալստեան սպասող  
անխօս ծառաներ են կանգնած: Դրանք իմ հաւա-  
տարիմ ընկերներն են, որոնք տարուայ ոչ մի ժա-  
մանակում ենձ չեն լքանում, հրեշտակներ և սե-  
րովբեներ են, որոնք ենձ լուս, մզմ և քաղցր  
խօսքեր են շշնջում, —օրուայ ու գիշերուայ ամեն  
ժամերին ենձ այցելող երկնային ոգիներ են:

Պրոկտեր:

**Ս**ակայն յաճախ այդ ծառաները բոլորովին իզուր են սպասում,  
և որպէս ինձ թվումէ, զլիսաւորապէս այն սպատճառով, որ վերջին ժա-  
մանակ խիստ շատ գրքեր են տարածուել:

Հնումը, որպէս ես արդէն ասել եմ գրքեր քիչ կային, իսկ այժմ  
ամբողջ դժուարութիւնը գրքերի ընտրութեան մէջ է: «Խերկայ ժամա-  
նակում Բայրոնի խօսքերով՝ «Խօսքի մէջ է ոյժը» Թանաքի կաթիլը

\*) «Փողովը ական գրադարանի խմբագրութիւնից»՝ Անդրեական հուշա-  
կառը բնախոյդ Զօն Լեբեօկի վերոյիշեալ խորագրով յօդուածը մենք զետե-  
ղում ենք որպէս գրագիտութեան ընդարձակ շըշանի ներածութիւն: Հա-  
մաշխարային գրակնութեան ամենալաւ գրքերի մասին, ծաղած հարցը  
անգլիական հասարակութիւնը վաղուց է բարձրացրել, որ լրազների միջո-  
ցով ոկտել է նենդիքը գիտել յայտնի գրադէաներին և գիտնականներին  
ցոյց տալու համար իւրեան, ո՞րոնք են, նրանց կարծիքով, «ամենալաւ գրք-  
քերը», Խարեկէ, Լեբեօկի մատնանիշ արած շատ զըքեր միայն և եթ անգ-  
լացիների համար նշանակութիւն ունեն: Յամենայն գէպս մենք այդ ցու-  
ցակը չենք աւաճարկում, որպէս մի բաւարար ցուցակ, այլ Լեբեօկի յօդուա-  
ծով մատնանիշ ենք լինում խիստ կարեուք հարցերից մէկի վերայ:

14133-58

8

բաւական է, որ ընկնի մեր մաքի վերայ, որ մեր մէջ խոհերի առատ աղբիւր ծնի: Այդքան մեծ է մեզ վերայ տառի իշխանութիւնը, որ բոլոր դարերը կապում է ուժեղ շղթայով: Ամբողջ մարդկալին ազգը կը լլանէր մահուան բերանը, եթէ թուղթը՝ լաթի այդ կտորը մարդկանցից և նրանց շիրմներից երկար չապրէր: Մենք պէտք է ընտրութեամբ կարդանք, որ չընկնենք մոլորութեան մէջ, որպէս Ռւլիսաի ուղեկիցները, որոնք երեակայեցին, որ Էօլից Ռւլիսաի ընծայ ստացած տիկը իւր մէջ թանկագին բաներ է պարունակում, մինչդեռ իսկապէս նա լի էր մըրկարեր քամիներով և պէտք է յիշենք, որ խօսքը ամեն ժամանակ մտքի և հետազօտութեան գործիք չէ հանդիսանում: Կան զանազան գրքեր, կան և այնպիսիները, որոնք գրքերի անուան էլ արժանի չեն և որոնց կարելի է յարմարեցնել այս երկդիմի նախադասութիւնը, որ մի անգամ ասուած է եղել մի անյաջողակ հեղինակի. „Նս ժամանակ չեմ կորցնիլ ձեր գիրքը կարդալու համար“: Պէտք է, արդարն, զարմանալ որպիսի անհոգութեամբ ենք վերաբերվում մենք դէպի այդ առարկան և նոյն այդ բանով զրկում ենք մեզ շատ անմեղ բաւականութիւններից: Ճիշդ է ասում արեելեան առածը, որ „Երկնքի ուղարկած աղէտներից գեռ կարելի է թագնուիլ, բայց մեր ձեռքով պատճառած դժբաղութիւններից փրկութիւն չկայ“:

Հատերը չեն վստահանում լուրջ գրքեր կարդալու, վախենալով, որ իրանք նրանցից ոչինչ չեն հասկանալ: Ինձ թվում է, որ մեծ մասամբ այդ երկւղը բոլորովին անհիմն է. գրեթէ առանց սխալուելու կարելի է ասել, որ եթէ մարդ ցանկանայ, ամեն բան կարող է հասկանալ:

Այնուամենայնիւ կրկնում եմ, որ գրքեր կարդալու ժամանակ պէտք է դեկավարուիլ այն բանով, որ մեզ ամենից աւելի է հետաքրքրում: Դատ տարիներ սորանից առաջ, երբ ես դիմեցի Թարփինին խնդրելով, որ նա ցոյց տայ ինձ պարապմունքների համար որ և է առարկայ, նա ամենից առաջ ինձ մի բանի հարցեր տուեց, ցանկանալով իմանալ, ինչով եմ ես ամենից շատ հետաքրքրվում և ապա արդէն խորհուրդ տուեց փիլիսոփայութեամբ պարապելու:

Մօտաւոր ապագայում ընթերցող հասարակութեան կօնտինգենտը, իմ կարծիքով, բաղկանալու է ոչ ինտելիգենտ մարդկանցից՝ բը ժշկներից, վաստաբաններից և այլն, և անգամ ոչ դործարանատէրերից և արդիւնաբերողներից, այլ իսկապէս արհեստաւորներից և երկ-

րագործներից: Այլապէս չի էլ կարող լինել: Ինտելիգենտ մարդը ամբողջ օրը աշխատում է գլխով, ուստի զարմանալի չէ, որ պարապմունքներից ազատ ժամանակը նա գործ է դնում հանգստութեան կամ մաքուր օդի մէջ ֆիզիքական վարժութիւններ անելու ճանապարհով կորցրած ուժերը վերականգնելու վերայ, այն ինչ երկրագործը կամ արհեստաւորը ընդհակառակիլը, ամբողջ օրը զբաղուած է ֆիզիքական աշխատանքով, ուստի ուրախութեամբ իւր ազատ ժամանակը կնուիրէ ընթերցանութեան: Ճիշդ է, որ այդ տեսակ փորձերը մինչեւ այժմ դեռ աննշան են եղել, բայց պէտք չէ մուանալ, որ այդ բանի համար գոյութիւն ունեն կարևոր պատճառներ, որոնք թագնուած են, և որ պէտք է ապատական կամաց հեռացնվում են, որպէս աւելի ու աւելի բազմացող ու գեղեցիկ կրթութիւն տուող տարրական դպրոցների բացուելով, նոյնպէս և գրքերի սատիճանաբար, նկատելի կերպով էժանանալով:

Եթօսկինը զարմանում է ոչ այն բանի համար, որ մարդիկ այդուշափ շատ են տանջփում, որովհետև շատ յաճախ մենք տանջփում ենք ուրիշ մարդկանց սխալների չնորհով, այլ այն բանի համար, որ մենք այդչափ շատ կորցնում ենք մեր սեպհական տղիստութեան չնորհով:

”Եթէ ես առիթ տնենայի աղերսել երկնքից, ասում է Հերշելը, որ նա ինձ այնպիսի հակում չնորհէր, որ կարող լինէր կեանքի բոլոր հանգամանքներում պահպաննել ինձ—բաղդատորութեան և ուրախութեան անսպառ աղբիւր լինէր և ամեն տեսակ թշուառութիւնների և մարդկային ատելութեան դէմ ցանկապատ լինէր, ես կինդրէի, որ ինձ սէր ուղարկէր դէպի ընթերցանութիւնը: Ես խօսում եմ նրա մասին միայն որպէս զուարձութեան կամ ժամանակը ախորժ կերպով անցկացնելու միջոցի մասին, բոլորովին չպակասացնելով դրանով կրօնի նշանակութիւնը, որ աղէտների տարիներում մարդի ամենազօրեղ միխթարիչն է: Տուէք այդ սէրը մարդին, նրան միջոց տուէք այդ սիրոյն բաւականութիւն տալու համար և դուք կտեսնէք, որ նա բադդաւոր կինի, հարկաւ, միայն այն դէպում, եթէ նրա ձնոքը վաստգրքը չին ընկնիլ միայն“:

Բաւական չէ գրագարան ունենալ, պէտք է իմանալ նրանից օգտուելն էլ: Որպէս յայտնի է, անթիւ անհամար գրքեր կան, այն ինչ ընթերցանութեան համար ժամանակը սակաւ է, մինչդեռ մարդ-

կանց մեծամասնութիւնը կարդում է ամեն բան, ինչ որ ձեռքն է ընկնում, յաճախ գիրք են ընտրում նրա գրաւիչ խորագրի համար և անգամ գեղեցիկ կազմի պատճառով: Սակայն չի կարելի ասել, որ գրքերի ընտրութիւնը հեշտ գործ լինէր և իմ կարծիքով, այդ գործին գիտակ մարդիկ ընթերցող հասարակութեան մեծ ծառայութիւն մատուցած կինէին, եթէ իրանց վերայ վերցնէին ժամանակ առ ժամանակ ամենալաւ գրքերի ցուցակներ լոյս հանելու աշխատանքը: Ասում են, իբրև թէ իրաքանչիւրը իւր ճաշակի համեմատ պէտք է գրքեր ընթերցանութեան համար. այդ ինձ յիշեցնում է հետեւեալ խորհուրդը՝ ջուր մի մտնիլ, մինչև լողալ չես սովորել:

Ցանկալով, գէթ մասամբ, լրացնել այդ պակասը, ես մօտաւորապէս հարիւր գրքերի ցուցակ եմ տալիս, գրքերի, որոնք ընթերցանութեան համար ամենալաւ գրքեր են ճանաչուած, աւելացնելով իմ կողմից զիմաստրապէս ինձ դուր եկող շարադրութիւնների մի քանի անուններ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ես այդ ցուցակից հանեցի ներկայումս ապլող բոլոր հեղինակներին, թէպէտև նրանցից շատերի երկասիրութիւնները, օրինակ, Տեսնիսօնի, Ինօսլինի և ուրիշների, ինձ ամենակենդանի վայելցութիւն և ամենամեծ բաւականութիւն են պատճառում: Նոյնպէս ես չմտցրեցի և զիտական գրքեր այն հիման վերայ, որ մեր ժամանակում գիտութիւնը արագ քայլերով է առաջ դնում և այդ հիւղերի մէջ դժուար է ցոյց տալ այնպիսի շարադրութիւններ, որոնք անվճելի հեղինակութիւն վայելէին:

Խոստովանում եմ, որ այդ փորձը բաւական համարձակ փորձ է, բայց ես յոյս ունեմ, որ ներողամտաբար կիերաբերուին դէպի նա և որ նա առանց քննադատական գնահատութեան չի մնալ և կստիպի ինձանցի աւելի հեղինակաւոր մարդկանց յայտնել իւրեանց մտքերը, որ բանի վերայ ես զիմաստրապէս յոյս եմ դնում:

Նմանօրինակ ցուցակները պէտք է կազմուին ընդհանուր դատավճուի հիման վերայ: Պոյութեան կոիւը մեծ դեր է խաղում ոչ մի-այն կենդանիների և բոյսերի կեանքի մէջ, այլ նոյնպէս և գրքերի գործի մէջ. ամենալաւ գրքերը աւելի երկար են ապրում տւելի թոյլ գըրգերից, որոնք և անհետ կերպով կորչում են: Թէպէտև, ընդհանուրի ընդունուած կարծիքով, հին գրքերը ճիշդ այնպէս, որպէս և հին փայտերը, հին գինին և հին ընկերները, շատ բարձր են գնահատվում,

սակայն և այսուեղ մի քանի սահմանափակումներ, բացառութիւններ պիտի թոյլատրուին, Պատմութեան և գիտութեան ուրիշ հիւղերին վերաբերեալ նորագոյն երկասիրութիւնները պարունակում են կամ գէթ պիտի պարունակին ամենից աւելի միշտ տեղեկութիւններ և ամենից աւելի ուղիղ եղանակացութիւններ, չխօսելով այն մասին, որ որչափ և հետաքրքրական է հին ժամանակների և ազգի պատմութիւնը, մեզ համար բնականաբար աւելի հետաքրքրական են այն գրքերը, որոնք խօսում են մեր ժամանակակից կեանքի մասին:

Եյնուամենայնիւ հնագոյն գրքերը գնոջ են և թանգ հէնց իւրեանց հնութեան չնորհով, այն պատճառով, որ նրանք իւրեանց ժամանակին հասարակական կարծիքի վերայ աղդեցութիւն են ունեցել և միլլիոնակոր մարդկանց աղատութեան ժամերն են քաղցրացրել: Ընթերցողների մեծամասնութեան այդ երկերը միայն թարգմանութեան մէջ են մատչելի, բայց չէ որ և թարգմանութիւնները գեղեցիկ են լինում, որին օրինակ կարող է լինել աստուածաշունչը:

Առաջին տեղը ոչ բրիտոնեայ բարոյախօսների շարադրութիւնների մէջ, իմ կարծիքով, բանում է Էպիկտետէսի «Էնքրիփիդիոն»ը: Ամբողջ զրականութեան մէջ ես աւելի բարձր երկասիրութիւն զիտեմ և զարմանում եմ, որ այն այդչափ սակաւ են կարդում, մանաւանդ որ գիրքը մէծ չէ, շատ թեթև է գրուած և բացի այդ գեղեցիկ է թարգմանուած: Ապա հետեւում է Մարկոս Աւրելիոսը: Կոնֆուցիոսի «Անալիկուները», այսինքն, ընտիր հասուածները և «Ղուրան»ը ընթերցողին կարող են հետաքրքրել միայն այն ահագին աղդեցութեան պատճառուի, որ նրանք ունեցել են և մինչև այժմ ունին միլլիոնակոր մարդկանց վերայ, ուստի բաւական է մի քանի հասուածներ կարդալ այդ շարադրութիւններից: Ուրիշ բան է Արիստոտելի «Բարոյազիտուրին»ը որ ծառայել է իրբու հիմք բարոյականութեան մասին մեր ունեցած բոլոր գաղափարներին: Առաքելական սուրբ հայրերի գրուածները, որոնք ժողովուած են մի գրքի մէջ, զանց առնել չի կարելի: Հետագայ գրուածներից ես միայն «Ս. Օգոստինոսի խոստովանուրին»ը կառաջարկէի, որովհետեւ նա թարգմանուած է բոլոր Եւրոպական լեզուներով և մեծ ժողովրդականութիւն է վայելում, թէպէտև Լուտերը հաւատացնում է, իբրև թէ Ս. Օգոստինոսը կրօնին վերաբերեալ ոչինչ չէ գրել:

Այսպէս ասած ուրիշ խրատական գրքերի մէջ ամենամեծ հոչակ

Են կայելում թովմաս Կեմափացու „Նմանողութիւնը քրիստոսին“, Պատակալի „Մտքերը“, Սպիհնողայի „Քաղաքական-աստուածաբանական տրակտատը“, Բուտկերի „Կրօնների ջատագովութիւնը“ (Ապալոդիա) և ուրիշները:

Քաղաքական բաժնի մէջ առաջնութիւնը անկասկած պատկանում է Արքատուելին և Պղատոնին: Խրաքանչիւր կրթուած ընթերցող, որ հետաքրքրում է մարդկային մաքի զարգացման պատմութեամբ, մեծ բաւականութեամբ կլարդայ Արքատուելի «Քաղաքականութիւնը» և Պղատոնի «Տրամախօսութիւնները» (Ճալօգի), եթէ ոչ նրանց ամբողջ ծաւալով, գոնեա հատուածներով, օրինակ, «Ֆեղոնը» «Զատագովութիւն» (Ապօլօգիա) և «Հասարակապետութիւն»ը:

Որովհեսկ Ալիստուելը արդարացի կերպով գիտական եղանակի (մեթոդի) հմբնադիր կարող է համարուել, որին գիտնականները մինչև այժմ էլ հետևում են, ուստի ոչինչ զարմանալի բան չկայ, որ մենք կատարելապէս թափանցուել ենք նրա գիտական սկզբունքներով, որոնք գրեթէ անսխալական են ձանաշխում: Իսկ գիտողական ընդունակութեան շրջանում նա տեղի է տալիս հետագայ հետախոյզներին, որոնք աշխատել են աւելի բարեյաջող պայմանների մէջ, թէպէտև այդ ճիւղի մէջ նա հոչակաւոր գիւտեր է արել: Օրինակի համար վերջննք նրա դիտողութիւնները մեղուների կեանքի վերայ. նա առաջինը նկատեց, որ մեղուները խիստ սպահանում են հետևեալ կանոնը. նրանք իւրաքանչիւր անգամ փեթակից դուրս թռչելիս միայն ծաղիկների մի տեսակից են մեզը ժողովում:

Ուրեմն ապերախտ չիններ մեր մեծ ուսուցչի վերաբերութեամբ այն պատճառով, որ նա մեզ սովորեցրեց գիտութիւնը առաջ մղել:

Ինչ վերաբերում է Պղատոնին, ես չեմ կարող չնկատել, չնայած, որ ես կատարելապէս յարգում և՛մ նորան, որ նա յաճախ է դիմում բառախաղի. նրա ֆայլուն, տաղանդաւոր փաստերը, ապացոյցները միշտ համոզիչ չեն և ուրիշ լեզուներով թարգմանելու ժամանակ կարող են բոլորին հակառակ միտք ստանալ: Եյլ եղանակի անբաւականացուցիչ լինելու պատճառով, որի չնորհով բնագանցական փիլիսոփայութիւնը (ՄԵԹՈՓԻԶԻԿԱ) չատ առաջ չինաց, Սոլկրատէսի «Տրամախօսութիւնները» ներկայ ժամանակում էլ չեն կորցնում իւրեանց նշանակութիւնը. իսկ նրանց յարուցած խնդիրները միշտ կհետաքրքր քրեն, և մենք միշտ կխոնարհուենք մեծ իմաստասէրի հանգիստ, վստակելի առաջ:

Յիշեմ նոյնպէս Դեմոսթենէսի «Պսակ»-ի մասին, որ Լօրդ Բրուէմը «ամենամեծ հոետորի ամենամեծ ճառ» անուանեց, Հորսցիսովի, Լուկրեցիսի, Պլուտագրոսի «Կենսագրութիւնների» մասին և գոնեակիկերոնի «Պարտականութիւնների», «Բարեկամութեան» և «Ծերութեան» մասին:

Դիցագնական վիստասանութիւնը բոլոր ժամանակներում գրականութեան ամենաժողովագրական ճիւղն է համարուել, այն ինչ հազիւ մէկը դպրոցից դուրս գալուց յետոյ, կարդում է «Եղիական»ը կամ «Ոլիսական»ը, Հեղիոդոսի կամ Վիրզիլիոսի գրուածները:

Անգլօ-Սակոսնական հոչակաւոր «Նիբելունգներ» գիւցազնական վիստասանութիւնը սակաւ է կարգացվում, գուցէ այն պատճառով, որ նա ծանր տպաւորութիւնն է գործում: Իհարկէ, Բրունգիլլգան և Կրեմգիլլգան հետու են կատարելութիւնից, բայց միւնչոյն ժամանակ ամբողջ յունական և հուոմէական զբականութեան մէջ ոչ մի տեղ դուք չէք գտնիլ այսպիսի կենդանի կանանց տիպեր:

Էսքիլիսի «Գրամիքուս» հին յունական ամենալաւ ողբերգութիւնն է համարվում: Յիշենք նոյնպէս նորա «Տրիլոգիա»-ն և «Ոկրսէա»-ն: Ապա Սոփոկլէսի «Էղիակոս»ը, Խրիստիդեսի «Մէդեա»-ն, Սրիստոփանի «Հեծեաներ»ը և «Ամպերը»: Տարաբաղդաբար սորալեզուն այնքան դժուար է և խրթին, որ, Շեկելի խօքերով, ամենամեծ գիտնականը չի կարող հասկանալ նորա սրախօսութիւնների կէսը անդամ: Ուստի ես կարծում եմ, որ ժամանակակից ընթերցողը մեր ժամանակակից բանաստեղծներին կգերադասի նրանից:

Ես կցանկայի մի խօսք էլ ասել արեելեան բանաստեղծութեան մասին, օրինակ, «Մագարգարատապայի» և «Բամայեանի» մասին, որ համառօտ կերպով նկարագրուած են Վելլերի «Ենդիաստանի պատմութեան» առաջին երկու հատորների մէջ: «Հան-Կամէի» մասին, որ գրել է պարսից հոչակաւոր բանաստեղծ Փիրդուսին, և «Ենդինգի» մասին, որ գասական չինական ձօների (ՕՃԵ) ժողովածու է:

Կարելի է նոյնպէս յիշել Օմար Կայամի հեղինակութիւնների մասին:

Պատմական գրուածները աւելի ու աւելի մեծ հետաքրքրութիւնն են գրաւում: Ես մատնացոյց կանեմ այստեղ մի քանի պատմական երկասիրութիւններ, որոնք մանաւանդ հոչակաւոր են իւրեանց գրականական արժանաւորութիւններով: Կանոնքոնի «Անարագիս»ը (Ար-

շաւանքը), Տակիտոսի «Գերմանիա»-ն, Հերոդոտոսի և Ֆուկիդիսի պատմութիւնը. իսկ ժամանակակիցներից՝ Խոմի «Անգլիայի պատմութիւն»ը, Կարլէլի «Ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւն»ը, Գրոտի «Յունաստանի պատմութիւն»ը, և Գրինի Անգլիական ազգի համառօտ պատմութիւն»ը:

Թէպէտո բազմաթիւ ընթերցողներ ամենից աւելի գիտական գրքերով են հետաքրքրվում, բայց 'ի նկատի առնելով վերոյիշեալը, ևս կիշեմ այստեղ միայն մի քանիսը՝ Բեկոնի «Նոր օրգանոն», Դարվինի «Տեսակների ծագում»ը:

Ճանապարհորդութիւններից հոչակաւոր են՝ Պուկի և Հումբոլդտի «Ճանապարհորդութիւններ»ը, Դարվինի «Բնախոյզի օրագիր»ը և ուրիշները. Խոսովանում եմ, եթէ ևս չափանիշի ցուցակը խիստ երկարացնելուց, ևս մատնանիշ կլինէի դեռ ևս չափ ուրիշ ճանապարհորդութիւնների վերայ:

Վաղուց չե, որ միստեր Բրայտը\*) մանաւանդ առաջարկում էր ընթերցողներին ամերիկական բանաստեղծներին, ենթադրելով, հաւանականորէն, որ նրանց կարդան նրանք, որոնք արդէն ծանօթ են Բայրոնի, Շէքսպիրի, Միլտոնի, Դանտէի և ուրիշ համաշխարային բանաստեղծների հետ:

Տակաւին բազմաթիւ գրքեր կան, որոնք ընդհանուր ժողովրդականութիւն են վայելում, բայց որովհետև ևս նպատակ եմ ունեցել ներկայացնելու, ոչ աւելի քան հարիւր գրքերի ցուցակ, ուստի պէտք է սահմանափակուիմ ցոյց տալով ամենից աւելի յայտնի գրքերը, օրինակ, Գոլդմարի «Վերֆիլոյի երեցը», Սլիֆտի «Գուլիվերի ճանապարհորդութիւն»ը, Դէֆօի «Ծօբինզոն Կրոսօ», «Սրաբական հերիաբներ», «Գոն Քիջուտ», «Ձնիսի կենսագրութիւն»ը և հեղ. Բօվլելի, «Բեօրկի ընտիր երկասիրութիւնները», Բէկոնի «Փորձեր»ը, Մոլիերի «Շերիդանի «Կատակիրութիւնները», Կարլէլի «Անցեալը և ներկան», Սմայլսի «Ինքնօգնութիւն»ը, Գեօթէի «Ֆառուստ»ը և «Ինքնակենապրութիւն»ը, և ապա Ագդիասնի, Մոնտենի, Մակոլէի, Էմիլսոնի և ուրիշների հեղինակութիւնները:

Դոյնալէս աւելորդ չէ ծանօթանալ Բերկիի «Մարդկալին գիտութեան» հետ, Ալիւիսի «Փիլիսոփայութեան պատմութեան», Դե-

կարտի և ուրիշների հետ. Միացնենք դորան մի քանի անգլիական պէտքերի անուններ՝ Տեկկերէի, Սնափառութեան տօնավաճառը և «Պենդենիս»ը, Դիլկենսի, Պիկլվիկի ակմբանոցը և «Դաւիթ Կոպաթերֆիլ»ը, «Ադամ Բիդ»ը և Զոն Էլիոտի Զրադաց Ֆլուսսի վերայ», Լիստոնի, «Պոմպէիալի վերջին օրերը» և Վալտեր-Սկոտի գրուծները, որոնք ինքն ըստ ինքեան ամբողջ գրադարան կարող են կազմել, բայց որոնց ես, ընթերցողի թոյլտութեամբ, կգետեղեմ մի համարի տակ:

Որքան քաղցր յիշողութիւններ կյարուցանի այդ ցուցակը այն ընթերցողի մէջ, որ յաճախ հանգստացել է զրքի վերայ օրուայ աշխատանքից և հոգսերից յետոյ, և որքան մենք անվերջ պէտք է չնորդակալ իննենք իւրաքանչիւրին մատչելի այդ վայելչութեան համար, մեզ ՚ի վերուստ ուղարկուստ այդ անթիւ ընկերների համար, որոնք երբէք մեզ չեն ձանձրացնում, երբէք չեն դաւաճանում, և երբէք մեզ չեն լքանում:

100 գրքերի ցուցակ, որից հանուած են ներկայում կենդանի հեղինակների աշխատութիւնները՝

#### 1. ԿՐՈՆ ԵՒ ԲԱՐՈՒՑԱԳԻՑՈՒԹԻՒՆԸ:

**Աստուածաշունչ\*):**

Խորհրդածութիւններ Մարկոս Աւրելիոսի:  
Էպիկուսէսի:

Բարոյագիտութիւն Արիստոտելի:

Անակեկաններ Կօնֆուցիոսի (այսինքն, հատուածներ Կոնֆուցիոսի շարադրութիւններից):

Բուդդա և նորա Կրօնը Սկետ. Իէրի:

Առաքելանան հայրեր Առեկի:

Նմանողութիւն Քրիստոսին Թուլմաս Կեմպիացու:

Խոսովանութիւն Ս. Օգոստինոսի:

Ղուրան (հատուածների մէջ):

\*) Այդ բաժնին կարելի է կցել Ֆերարի շաբադութիւնները՝ «Յիսուս Քրիստոսին կեանքը, Ա. Պօղոս Առաքելակի կեանքը և աշխատութիւնները» և «Քրիստոնէութեան առաջին օրերը» (Ժարդմանութիւն Լուսութիւնի).

Աստուածաբնական-քաղաքական տրակտատ Սպինօզայի:  
Մաքեր Պասկալի:  
Կրօնների ջատագովութիւնը Բուտյերի:  
Ճշմարիտ քրիստոնեայի կեանքը և մահը Տալլորի:  
Ճանապարհորդութիւններ դէպի սուրբ տեղերը Բունիանի:  
Քրիստոնէական տարի Կերի:

2. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ:

Տրամախօսութիւններ Պղատոնի. գլխաւորապէս նորա Փեղոնը,  
Զատագովութիւնը և Հասարակապետութիւնը:  
Սոկրատեսի նշանաւոր գործերը Կսենոփոնի:  
Քաղաքականութիւն Արիստոտելի:  
Պատկի մասին Դեմոսրենի:  
Պարտականութիւնների, բարեկամութեան և ծերութեան մասին  
Կիկերոնի:  
Կենսագրութիւններ Պլուտարքոսի:  
Մարդկային գիտութիւնը Բերկիի:  
Ճառ մեթոդի մասին Դեկարտի:  
Բանականութեան մասին Լոկիի:

3. Վ Ե Պ

Հոմերոս:  
Հեզիոդոս:  
Վիրգիլիոս:  
Մազարաբատա, Բամայանա — Հնդկական վեպ:  
Ճահ-Նամէ Ֆիրդուսիի:  
Նիբելունգների երգը:  
Հրտուր — Մալորիի մահը:

4. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ:

Շիկինդ (չինական գովաբանական երգեր — օձե):  
Պրոմէթէոս և Օրիստէյի Տրիլոգիա Էսքիլեսի:

Եղիպոս Սոֆոլիէսի:  
Մէգէյա Էվրիպիդիսի:  
Հեծեալներ և Ամպեր Արիստոֆանի:  
Հորացիոս:  
Լուկրեցիոս:  
Գէնտերբրիկական սրատմութիւններ Զոսերի:  
Շերսպիր:

Կորուսեալ գրախա, Լիցիդաս, Կօմուս և մանր բանաստեղծութիւնները Միլտոնի:  
Աստուածային կատակերգութիւն Դանտէի:  
Կախարդական թագուհի Սպենսերի:  
Բանաստեղծութիւններ՝ Դրայյենի, Վալտեր-Սկոտտի, Վորդ-Ավորտի:  
Քանդող, Կեխեմի անէծքը Սոռոտի:  
Փորձ քննադատութեան մասին, Վորձ մարդի մասին Պոպի:  
Բերնիս:  
Բայրուն:  
Դրեյ:

? Հունե՞ ?

5. Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն :

Հերոդոտոս:  
Անաբագիս Կաննավինստի:  
Ֆուկլիդիս:  
Դերմանիա Տակիտոսի:  
Տիտոս Լիլիոս:  
Պատմութիւն Անգլայի Խամի:  
Պատմութիւն Յունաստանի Գրոտի:  
Ֆրանսիական յեղափոխութիւն Կարլիյի:  
Ճամառօտ պատմութիւն Անգլայի Դրինի:  
Պատմութիւն Գիլբուփայութեան Լիւխսի:

6. Զ Ա Ն Ա Զ Ա Ն :

Արաբական հէքիաթներ:  
Ճանապարհորդութիւններ Պուլիվերի Սվիֆթի:

**Թօրինգոն Կրուզո Դէ-Ֆօի:**  
 Վերֆիլդի երէց Գոլդմիտի:  
**Դոն-Քիշոտ Սերվանտսի:**  
 Զոնսոնի կեանքը Բոսվէյի:  
**Մոյիեր:**  
 Կատակերգութիւններ Շերիդանի:  
 Անցեալը և ներկան Կարլէյի:  
 Նոր օրգան Բեկոնի:  
 Ճանապարհորդութիւններ Կուկի, Հումբուդտի:  
 Սելբոնի բնական պատմութիւնը Ուայսի:  
 Տեսակների ծագման մասին, բնախոյզի ճանապարհորդութիւնը  
**Դարվինի:**  
 Տրամաբանութիւն Միլլի:  
 Փորձեր Essay, հետեւալ գլորների՝ Բեկոնի, Խմի, Մակո-  
 ի, Մոնտենի, Աղիսսոնի, Էմիրսոնի:  
 Ընտիւ գրուածներ Բերկի:  
 Ինքնօգնութիւն Սմալյսի:  
**Զադիգ Առլենի:**  
 Փառաս և ինքնակենսագրութիւն Գեօրգի:  
 Միս Առուստեն Էմմի, կամ Հպարտութիւն և Նախապաշարմունք  
 Սնափառութեան տօնավաճառ և Պենդեննիս Տեկիերէյի:  
 Պիկվիկի ակմբանոց և Գաւիթ Կոպակերֆիդ Դիկիենսի:  
 Պօմպէյիայի վերջին օրերը Բուլվար Լիտունի:  
 Աղամ Բիդ Զորջ Էլլիոտի:  
 Դէպի արևմուտք! Կինգսլիի:  
 Վէսեր Վայտեր-Սկուտտի:

„Փողովրդական Գրադարանի“ խմբագրութեան ծանօթութիւն  
 1) Որովհետեւ 18 և 19 դարերը, բացի յիշած երկասիրութիւններից,  
 տուել են արդէն մտքի և երեսակայութեան մի շարք խիստ խոշոր ար-  
 տադրութիւններ, որոնց անկասկած, զեռ խիստ երկար ժամանակ վիճա-  
 կուած է մնալ օրպէս ուրախութիւն և մտքի զեկավարութիւն, մեզ  
 թվում է, չի կարելի լուռութեամբ անցնել նրանց, թէպէտ և այս օրի-  
 նակ շատ կլայնանային և բբոկի մատնացոյց արած գրադարանի շըր-

ջանակները: 2) Բացի այդ, ժամանակակից մարդկութիւնը չափազանց  
 կենացնի կերպով հետաքրքրում է նրանցով և զգում է նրանց կեն-  
 ական նշանակութիւնը իւր համար:

Սովորաբար ասում են, որ նորագոյն ժամանակի աշխատամի-  
 րութիւնները այնպիսի անվիճելի նշանակութիւն չունին, որպէս հինե-  
 րը, բայց եթէ այդ արտադրութիւնները և չունին այնպիսի բացարձակ  
 ստեղծագործական նշանակութիւն, որպէս նախընթացները, այնու-  
 ամենայնիւ նրանք նշանակութիւն ունին, որպէս կենդանի նիւթ մարդ-  
 կութեան հետազայ ստեղծագործութեան համար:

Մի խօսքով ամեներեան խոսափանում են, որ վերջին երկու  
 դարերը ամենից աւելի հռչակուեցին զիտական և քննադատական  
 մտքի զօրեղ կերպով լարուած գործունէութեամբ, որպէս զիտական-  
 գիլիսոփայական ստեղծագործութեան, նոյնպէս և բանաստեղծութեան  
 շրջաններում, ուստի անհրաժեշտ է, մեզ կարծիքով, օգտուիլ և նրան-  
 ցով, որպէս կուլտուրական նիւթով:

անսպասելի պահանջման քայլած է ուղարկուած  
առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ





0011006

2013

1045

ՀՀ Ազգային գրադարան



NL0017006

